

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

26.11.2003թ.

ժ. 11.<sup>00</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝** Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Գ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ա. Գաբրիելյան (*Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ*)

**Օրակարգի նախագծում՝** երկու հարց.

1. ՀՀ ԱՎԾ-ի կողմից 1998-1999, 2001 թվականներին իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունների անվանագրքոված տվյալների բազանները ՀՀ Կենտրոնական բանկին տրամադրելու մասին:

*/Չեկուցող՝ Հ. Պետրոսյան/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն հոկտեմբերի 13-19-ը Հյուսիսային Իռլանդիա՝ Դուբլին կատարած ուսումնական այցի վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան/*

2.2 Հաշվետվություն 2003թ. նոյեմբերին Ղազախստան կատարած այցելության վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/*

2.3 Հաշվետվություն 2003թ. նոյեմբերի 19-21-ը Թբիլիսիում կայացված «Սպառողների կողմնորոշման» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Ա. Գաբրիելյան, Ա. Թոխաթյան/*

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. ՀՀ ԱՎԾ-ի կողմից 1998-1999, 2001 թվականներին իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունների անվանագրքոված տվյալների բազանները ՀՀ Կենտրոնական բանկին տրամադրելու մասին:

*/Չեկուցող՝ Հ. Պետրոսյան/*

Նշվեց, որ սույն թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացվել է գրություն առ այն, որ վերլուծական աշխատանքների սահմաններում գների խորացված վերլուծության իրականացման, բնակչության սպառման ամսական կառուցվածքի, միտումների և սեզոնայնության ուսումնասիրման, ինչպես նաև արտադրության և սպառման սեզոնայնության միջև փոխկապվածության հետազոտման նպատակով խնդրվում է տրամադրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998-1999, 2001 և 2002 թվականներին իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին տրամադրելու ՀՀ Կենտրոնական բանկին ՀՀ ԱՎԾ-ի կողմից 1998-1999 և 2001 թվականներին իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում ձևավորված տնային տնտեսությունների անվանագերծված տվյալների բազանները (ներառյալ՝ միայն բնակավայրի մարզային և քաղաքային կամ գյուղական հատկանիշը բնութագրող կոդերը) վերլուծական աշխատանքների սահմաններում գների խորացված վերլուծության իրականացման, բնակչության սպառման ամսական կառուցվածքի, միտումների և սեզոնայնության ուսումնասիրման, ինչպես նաև արտադրության և սպառման սեզոնայնության միջև փոխկապվածության հետազոտման նպատակով:

Անվանագերծված տվյալների բազանները տրամադրել հետևյալ՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ վերոնշյալ վերլուծական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն հոկտեմբերի 13-19-ը Հյուսիսային Իռլանդիա՝ Դուբլին կատարած ուսումնական այցի վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան/*

2.2 Հաշվետվություն 2003թ. նոյեմբերին Ղազախստան կատարած այցելության վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/*

2.3 Հաշվետվություն 2003թ. նոյեմբերի 19-21-ը Թբիլիսիում կայացված «Սպառողների կողմնորոշման» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Ա. Գաբրիելյան, Ա. Թոխաթյան/*

**ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:**

*/Արձանագրային/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան